

օրհնութեամբ եղիցի: (Մեծն Եսայի Նշեցի վարժապետ բարունին է) Արդ եղեւ սկիզբն դրութեան սորա ի թվիս ԶԶԶ (1327) ի յամսեան մախիս ի յերեքշաբթի՝ տօնի երեւման խաչին, ի վանս Գլաձոր, յոր կոչի Աղբերց վանք, ընդ հովանեաւ սուրբ Նախավկային եւ սուրբ Գրիգորիս. եւ եղեւ աւարտ սմին ի սկսեալ նոր ամին ԶՀԷ (1328) յամսեան Օգոստոսի հինգն ի տօնի սրբոց Վարդանանց: Եւստու գրել զսա ձեռամբ կուսակրօն քահանայի, իմաստուն գրչի ե քաջ քարտուղարի Դաւթի Գետկեցւոյ (ըստ գովութեան արդարեւ էր մինն յերեւելի քաջ նօտարաց հայոց Դաւիթ վարդապետ Գետկեցի), բազում աշխատութեամբ եւ տքնութեամբ յոլով ջանս եղեալ մինչ զամենայն հին եւ նոր կտակարանս իւրով ձեռամբ յաւարտ հասուցեալ, որ եւ վարձատրողն եւ բարեաց բաշխողն տացէ յանձարեւելի եւ յանպակաս դանձուցն հոգոյ նորա եւ ծնողաց իւրոց եւ ուսուցչին իւրոյ ամէն:

Դարձեալ եւս նուաստ Առաքել պիտակ անուն վարդապետ ի յիշատակ ինձ (ստացայ զգիրքս) եւ ծնողաց իմոց, քաղցրիկ հօրն իմոյ Խոսրոսեղին եւ մօրն իմոյ Խաթութէ, եւ քեռն իմոյ Խորիշահի:

Ի վերջն Եղեկիէլի մարգարէութեան.

Փառք հօր անծնելութեան եւ որդւոյ ծնելութեան եւ հոգոյն բխողութեան... զստացող սուրբ գրոցս զԱռաքել վարդապետ եւ զանպիտան ծրողս զԴաւիթ յիշել ի Տէր:

Ի ներքոյ նորին առանց թուականի.

Զառապեալ Թորոս գրիչ յիշեալ ի Տէր Յիսուս Փրկիչ:

Ի վերջն Մարկոսի, թիւ չունէր.

Առաքեալ (վրդպ) Հաղբատեցի եւ բարունի եւ Թֆիլիսի, աղօթք արա գու Թորոսի, որ զգիրքս ծաղկեցի:

Ի վերջն Յովհաննու.

...Որոյ ցանկացեալ հետեւող եղեւ ոմն սրբազան եւ կորովամիտ բարունի Առաքել անուն յորջորջեալ, տենչացաւ այսմ աւետարեւր եւ լուսաւոր դանձուցս, եւ ետ գրել զսա ինձ մեղապարտ գրչի Դաւթի Գետկեցւոյ, ի վայելումն... նաեւ զմեծ հօնտօրն եւ զկորովաբանն եւ զծերացեալն ամենայն իմաստութեամբ եւ զարդարեալն խոհականան եւ արիականան, զտէլէտն իմաստից եւ զներհուն վարժապետն Եսայի (Նշեցին է) որ զօրինակն շնորհեալ. շնորհեցէ նմա ապենիազն Աստուած յանձարեւելի ծովէն եւ յանպակաս դանձէն, զոր պատրաստեաց Աստուած սիրելեաց իւրոց:

ՅԱԽԵԼՈՒԱԾ Բ. 25.

Ա. Գիրք. 201.

Զեռ. Էջմ. No. 636/734.

195ա. չեղագրով.

...ունքս ածայինն երանկաւք ներկելք եւ հոգոյն չնչմամբ սնելք, ինքն իսկ շնորհայրաշխն հոգին սրա-

ռաջնորդեցէ մտանել ձեզ ընդ դրունս հանճարոյ բանին: Այլ եւ բանն հաւր բազուկն բարձրել բացցէ զանդաստանս մտաց ձերոց եւ արկցէ սերմ բարէբոյս եւ գեղեցկայձեռն. ընդարձակեցէ զգծարանս խոհակա-նութե. ձերոյ առ ի յընդունել զմարդարիտն անչափ եւ մեծայգին. հանցէ զձեզ ի բարձրութե լերինն իմաստութե եւ առաքինութե եւ գրեցէ յոգիս եւ ի մարմինս ձեր զածային եւ զկենդանի պատգամսն. հնչեցէ յա-կանջս ձեր բարբառն երկնաւոր եւ լուսաւորեցէ զձեզ. լոյսն անվայրայիտ: Բխեցեն սիրտք ձեր զբան բարի եւ լեզուք ձեր պատմեցեն զգծս երկնից արքայի: Արկցէ զեզ ածային հանճարոյ հոգոյն ի ճրագս սրտից ձերոց եւ իմաստիւք լուսափայլութե. վառեցէ պատրոյկս մտաց ձերոց, //

195բ. եւ փայլեցուցէ զլոյս ձեր աղգի մարդկան եւ փ(առ)աւորեցի փառաւորիչն արժանաւորաց իւրոց:

Բայց թերեւս ասիցէ որ ի սիրելեաց եղբարց, թէ չլացել աչաց տկարին հայել ի ճառագայթ արեգականն ընդ լուսաւոր աստեղացդ, որ զվարճանայ յարեգակա-նէն բաց փախուցել: Արդ թէպէտ եւ այսպ. է, զի զանկարութի. անձին գիտելով ի ծայրագոյնն բարձրութի. յապաղեն ձգտիլ. բայց է եւ այլ իմն պատճառս մտա-ծութե. զոր ցուցանել պարտիմք: Առաջին զի զոր ինձ յերկնէ եւ յերկնայնոցն եւ յերկրէ եւ յերկնայնոցս (ս!) առիս բարեցն. եղանութիք. եւ շնորհ ողորմութե, նմին համեմատ միայնոյ եւ առաձնական: հաւրս հոգեւորի գտանի: ըստ որում միւս կողմ կացել. ամաշխարհի բան եւ զպարտս հատուցի կրողս բարի. ըստ իմում կարի պարտի(ս?) եւ նմին հաւասար յատուկ եւ անբաղդա-տելի բարեցն. Այ. հազարայպետիդ հատուցանել, յորմէ եւս ամենեւիմք վերջացեալ գտանիմ. եւ երկրորդ զի բանեղինիս (?) իմոյ կազմութե. ոչինչ գտանեմ յս. աւարտ գեղացկացուցիչ: վս որոյ իբրեւ զպսակ լուսա-փայլ եւ զթագ զարդարուն զյիշատակ սորայ եւ ի վերայ եղեալ, ի լրումն ածից զբանադ, //

196ա. բութի. զի զոր օրինակ արեգական լուսաւորելն եւ հրոյ ջնոռցանել եւ անուշ ե-ղոյ բուրեղն, այսպ. ի ձեռն քոյդ առաքինութե. բու-րաստանաց գիրք բազումք վրիպեն, իսկ զընայտ-պէն. վս զի ոմն կենդանի եւ շնչաւոր եւ ոմն ան-չունչ եւ անկենդան եւ ես զնոցայն կրեմ կիրս. թէ զիարդ որ հոգովն է յարմարել մասունք առաքինութեն ան-դամոց նկարեցից իմովս շնչօր բանիւ եւ տկար, զի աշխարհ ի խաչ ելել է նայ աշխարհի, զի արդ ըստ սա-րասի աշխարհի գովիս, որ փաղչիմ ի գովութէ. իբրեւ ի պարսաւանաց: Բայց եւ այս մասն է հեղութե, թոյլ տալ ըողի բարեօք ի կատարումն ածել զընթացս իմոց բանիս, մտանել ինձ յաւք մեծ մեծի աշխարհ այ... (ցեցակեր) ին կառուցել ի վերա փոքուս. տեսանել ինձ զդարձուն եղեմայտունկ, յորմէ բխումն քառայլտակ գետոցն յարփիւտոր յաղբիւրէն խոհականութե զարդա-րիչն բանի, յորմէ արգելք որ յերկունսն են բանի. ոսկեանջուլին պճնելք լուսաստու ակամբք եւ արիակա-նան թառամել բոյսք բողբոջին եւ գոյնայգեղ ելիւղ-